

Դարբանդը, ինչպէս որ մեր դրած պատկերին մէջ եւս կերեւի, լեռան վրայ շինուած քաղաք է՝ նեղ փողոցներով, և ճերմակ տները ետեւէ ետեւ աստիճան աստիճան երեւնալով ծովէն՝ շատ գեղեցիկ տեսք մը կուտան անոր: Վաճառականութիւնը օրէ օր ծաղկելու վրայ է, մանաւանդ Աժգէրխան երթեւեկութիւնը նոյն շոգենաւերուն բանելէն ի վեր, իսկ գլխաւոր ապրանքներն են մետաքս (իպրիշիմ), քրքում (սաֆրան), տորոն (քեօքայօյա), եւայլն:

Դարբանդը գլխաւոր քաղաքն է Տաղստան ըսուած երկրին, որ Կովկասին արեւելեան մասն է, և անուանը պէս լեռնային աշխարհ մի է, որոյ բնակիչներն են լեզկիք և ուրիշ կովկասային պատերազմող ազգեր: Սոցա գլխաւորն էր Շամիլ, որոյ պատմութիւնը յայտնի է ընթերցողաց, եւս առաւել յայտնի և սիրելի է ամենայն հայ մարդու Տաղստանի քաջակորով և մեծանուն զիւցազնը, հանգուցեալ Մովսէս Զաքարեան Արղութեանց, որոյ վրայ ընդարձակ տեղեկութիւն տալու յոյս ունիմք յետ սակաւ ժամանակի:

Արղութեանց իշխանին պաշտօնը կվարէ այճմ այն կողմերը ուրիշ նոյնպէս քաջահամբաւ հայկազն զօրավար մը՝ որ իւր իմաստութեամբը՝ քաջութեամբն ու ազգասիրութեամբը ծանօթ է արդէն թէ հայոց և թէ օտարաց, այն է Միքայէլ Տարիէյեան Լօռու Մէլիքեանց զօրապետը»:

Ք Ա Ղ Ո Ւ Ա Ծ Ք

ի «Դարբանդ Նամէ» անուանեալ սլարսկական սլատմութենէն Դարբանդ քաղաքի սկսեալ 733 տարի յառաջ քան զՔրիստոսի Յարութիւնն, եւ աւարտեալ ի 1850 ամի:

Ա. 2. «Յիսուսի Քրիստոսի յարութիւնից 733 տարի յառաջ Իրանում թագաւորում էր Լէխրասիք շահը. խաղիւրները այսինքն Դաղստանցիները, Զէրքէզները և Կուբանցիները (Զաչանցիները) մեծ բազմութեամբ անցան Կուր գետը, աւար առին զիւզեր և քաղաքներ Ատրպատականի նահանգում, և աւերելով բոլոր եր-